ՇԱԲԱԹ 26 ՄԱՅԻՍԻ 1879

ՇԱԲԱԹ 26 ՄԱՅԻՍԻ

№ 39 ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 39

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԷՆ 10
ՄԻՋԱԿ ՏԱՌԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1
ԿՈՊԷԿ·

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ-
ՆԵՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ·

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹԸ
ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ·
ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 8 Ռ.

ՕՏԱՐԱՔԱՂԱՔ· ԴԻՄՈՒՄ ԵՆ ՈՒՂՂԱԿԻ
ВЪ РЕД. ГАЗЕТЫ „ПЧЕЛА АРМЕНИИ“
Г. ТИФЛИСЪ.

ԹԻՖԼԻՍ 26 ՄԱՅԻՍԻ

—

Էգուց կիւրակէ Մողնու ժողովըրդականք հրաւիրվում են նոր երեսփոխան ընտրելու իրանց եկեղեցու համար: Անցեալ կիրակի ընտրութիւնը չյաջողուեցաւ: Երեսփոխանի իւր պաշտօնը թողնելու պատճառն, ինչպէս երեւում է, անհամաձայնութիւնն է, որ ծագել է նորա և միաբանից մէջ: Մենք չենք կամենում և ոչ մէկին դատապարտել, միայն կարծում ենք, որ այդպիսի անհամաձայնութիւնք շատ անգամ պատահել են և էլի կպատահեն, քանի որ չկան հրահանգներ և կանոններ, որոնք որքան հնար է մանրամասնաբար որոշէին թէ երեսփոխանի և թէ միաբան քահանայից պարտականութիւնքն ու իրաւունքները: Ուստի և իւրաքանչիւրն էլ իրան աւելի շատ իրաւանց տէր համարելով՝ միշտ անցնում է իւր սահմանն ու չափն ու միջոց տալիս միւսին դժգոհութեանց: Այդ գիրքն աչքի առաջ ունենալով, մենք խորհուրդ կտայինք Մողնու ժողովըրդականաց նախ անտարբեր չմնալ՝ դէպի իրանց եկեղեցին, ընտրել արժանաւոր, ազնիւ, բարի վարքի կողմանէ վկայած և հասկացող անձն և յետոյ՝ այդ երեսփոխի նախագահութեամբ կազմել մի յանձնաժողով, որ մշակէր եկեղեցւոյ արդեանց և գործոց վարչութեան համար մի կանոնադրութիւն, որ հաստատութիւն գտնելով հոգևոր իշխանութեան կողմանէ, դառնար ղեկավար ամէն երեսփոխանների և քահանայից գործունէութեան իրանց եկեղեցու մէջ: Այս միջոցով միայն կարող են վերանալ մեր եկեղեցիներից անվերջ անբաւականութիւնքն, որ ամեն տեղ լսվում ու տեսնվում են: Բացի երեսփոխից լաւ կլինէր, որ ընտրվէին և մի քանի անձինք, որ կազմէին խորհուրդ, միշտ երեսփոխանի հաշիւները քննելու համար: Եւ այդ մի ծանր բան չէր, արժէր միայն, որ ամեն կիրակի ժամից յետ կէս կամ մի ժամ ընտրվածները ժողով կազմէին, իսկ քահանայք բնական օգնականներ պէտք է լինին երեսփոխանի, որովհետև եկեղեցական արդեանց մեծ մասը նոցա ձեռքով է հաւաքվում, նոքա են միշտ ներկայ լինում եկեղեցում ամեն ծխակատարութեանց ժամանակ: Այս ամենը կատարելով Մողնու ժողովըրդականք օրինակ կլինեն այլոց, ինչպէս և կը վայելէ նրանց:

Թող ընտրեն նոքա երեսփոխան, բայց իմանան, որ երեսփոխանը ժողովրդեան ներկայացուցիչն է. Նա ամենընտիր անձը պէտք է լինի բոլոր ծխի մէջ, յարգանք, պատիւ և վստահութիւն վայելող: Եթէ Մողնու ժողովուրդը իրան պատուին և վարկին յարմար անձը չի ընտրել, ցոյց կտայ, որ ինքը բոլորովին անտարբեր է, ոչ եկեղեցու շահերն է ճանաչում և ոչ էլ իր պատիւը: Երեսփոխանը կշիռ պէտք է ունենայ թէ ժողովրդեան և թէ հոգևոր իշխանութեան առաջ: Կը յուսանք որ Մողնու ժողովուրդը չի շտապել և խորհելով ու խոհեմութեամբ կընտրէ իւր երեսփոխանն ու կիրագործէ վերոյիշեալները թէ եկեղեցու շահերի և թէ իւր պատուի համար:

* * *

Կ. Պոլսոյ Մասիս լրագիրը հատարակել էր լուր, իբր թէ Մանկունի Վահրամ եպիսկոպոսը Կ. Պոլիս գնալիս տարել էր հետը նշանաւոր գումար (որ շատ հաւանական կարող է լինել) և աշխատում է պատրիարքութեան հասնելու: Այս տեղեկութեանց ճշտութիւնը մի կողմ ենք թողնում, ապահով լինելով երիտասարդ եպիսկոպոսի ցանկութեանց և հարկ ենք համարում մի քանի խօսք ասել եպիսկոպոսի այն յանդուգն և ապերասան պատասխանին, որ նա հրատարակել էր Լրագիր անուն թերթի մէջ ընդդէմ Մասիսի խմբագրութեան: Հ. Մանկունու պատասխանը մի անձնապաստան երես առած մի մանկան պատասխան է. Նա ամօթ է համարում, որ Մասիսի նման թերթերը դովաբանեն նորա գործունէութիւնքն, դորա համար կան լրագիրք և մրագիրք, որոնց խունկ ծխելով շատ գոհ է: Բայց էջմիածնի (գլխաւորապէս իրան Մանկունի եպիսկոպոսի) ախրագործութիւնք այնքան մեծ են, որ եթէ մարդիկ լռեն, քարինք կաղաղակեն: Հ. Մանկունին ապահով է, որ քարինք բնաւ չեն աղաղակել, իսկ դժբաղդաբար ազգի համար և բարեբաղդաբար Հ.

ԱՂԱ ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏԻՉ ՄՈՒՐԱՏԻ ԿՏԱԿԸ·

(Շարունակութիւն և վերջ)·

—

Այսպիսի կերպիւ վճռելով առաջին հարցը դրականապէս և ակներև ապացուցանելով Մխիթարեանների ընդդիմութեանց միանգամայն սուտ լինելը, որ երբէք չի տայ նոցա իրաւունք օտարացնելու, կամ սեփականացնելու ազգային ժառանգութիւնը, մենք դրականապէս վճռած պիտի համարենք և

Երկրորդ խնդիրը, որ առաջինի կանոնաւոր հետևանք է, այն է թէ ունի՞ արդեօք Հայ ազգը իրաւունք հաշիւ պահանջելու Մխիթարեան միաբանութիւնից ազգիս կտակած գումարի, կալուածների, սոցա արդիւնքների և վարժարանի նիւթական մատակարարութեան վերաբերութեամբ: Այդ հարցը դրականապէս արդէն վճռուած է, ինչպէս դուք տեսաք պատմութիւնից, քանիցս անգամ և ազգի հաշւետեսութեան իրաւունքը արդէն ճանաչուած է Աւստրիացւոց և Գաղղիացւոց տէրութեանց կողմից, նմանապէս և կտակակատար Յովհաննէս Մուրատեանի կողմից:

Ամենայն իրաւամբ աշխարհիս օրէնքներն ընդունում են և կատարելապէս որոշում են, որ կտակակատարները, (եթէ այդպիսի նշանակութիւն մենք տանք Մխիթարեան միաբանութեանը,) պարտաւորին, պատասխանատու են ժառանգների առաջ թէ կտակի ճշմարիտ կատարելու և թէ իւրեանց գործերի և ծախքերի մասին կտակի կատարման համար: Դարձեալ կրկնում եմ, որ թէ միաբանութիւնը և թէ նորա կանոնաւոր գործակալները ազգիս հաշւապահանջութեան իրաւունքը իւրեանց պարտականութիւն են համարել: Մտաբերեցէք Մխիթարեան միաբանութեան պատասխանը Աւստրիացւոց տէրութեան և միաբանութեան թղթակցութիւնները իւրեանց անդամոց հետ, օրինակ Ս. Թէոդորեանի հետ հաշւետեսութեան մասին:

Եւ իսկապէս եթէ դուք ընդունում էք որ Մխիթարեան միաբանութիւնը չէ սեփականատէր Ս. Մուրատի հրիտակի գումարին, թէ միաբանութիւնը ունի մի կատարեալ կրաւորական դեր, կամ ունի պարտաւորութիւն միայն Հայ ազգի, իբրև ժառանգի, իրաւունքն ի կատար ածելու, դուք արդէն ընդունում էք, որ ձեր հաշւապահանջութեան իրաւունքը անկասկածելի է:

3) Բայց այնտեղ կարելի է մի միտք յայտնել, թէ գուցէ այդ իրաւունքները ժամանակի ընթացքում մենք կորուսած լինինք, որովհետև ամենայն իրաւունք ոչնչանում է, ջնջվում է, եթէ որոշեալ ժամանակամիջոցում նա չէ իրագործվում: Կարող են գտնուել մեր մէջ և այնպիսիները, որոնք կը զարմանան, թէ ինչպէս կարելի է այժմ հարց յայտնել մի կտակի մասին, որ գրուած է 1808 թուականին: Այդ զարմացողներին մենք միանգամայն կարող ենք հանդարտացնել հաւաստի առնելով, որ ա. Ս. Մուրատի կտակած գումարի վերայ մենք ոչ թէ չենք կորուսել մեր իրաւունքը, այլ մինչև անգամ կորուստի մասին այս գրուածում խնդիրը չի կարող ծագել, ժամանակի ընթացքը այստեղ ոչինչ դեր և ազդեցութիւն չունի, նորա մասին խօսք անգամ չէ կարող լինել և բ. եթէ ժամանակի ընթացքը անդէք ունենայ այստեղ, մենք դարձեալ մեր իրաւունքը Ս. Մուրատի կտակի վերայ չենք կորցրել: Նախ ժամանակամիջոցի կորուստի խնդիրն այս գրուածում կարևորութիւն չը կայ յարուցանելու, որովհետև կտակի իրաւունքը անգործադրելի չի մնացել: Հայ կաթոլիկները օգուտ են քաղել այդ կտակի դըրամից, ուրեմն ժառանգը և ժառանգութիւնը որոշուած և գործադրուած է եդել, որովհետև Հայ կաթոլիկները Ս. Մուրատի կտակով որոշուած ժառանգի, Հայ ազգի մի մասն են: Ազգութիւնը — ամբողջութիւն է, չի կարելի նորան մասների բաժանել: Բացի այդ մի և նոյն կտակից օգտուել են և Հայ Լուսաւորչականք, ինչպէս տեսանք պատմութիւնից. մինչև Ֆրանս-Պրուսական պատերազմը, մինչ 1870 թուականը: Ինչպէս կերևի հետևեալից Ս. Մուրատի կտակի խնդիրները պիտի լուծուեն Անգղիացւոց օրինաց և կարգերի զօրութեամբ: Իսկ այդ օրէնքները կտակի խնդիրների և իրաւանց լուծումն և գործադրութիւնը սահմանափակում են քառասուն տարուայ ժամանակամիջոցում, այն էլ նոցա համար, որք բնակվում են Անգղիացւոց պետութեան սահմաններում: Ուրեմն եթէ մեր ազգի Ս. Մուրատի կտակի վերայ հիմնած ժառանգական իրաւունքները ջնջվելու լինէին մի որոշեալ ժամանակամիջոցում, այդ միջոցը կորցրած չէ: Թէպէտ, կրկնում եմ, այս գրուածում ժամանակամիջոցի խնդիր անկարելի է յարուցանել:

4) Նայելով մեր ազգի այժմեան դըրութեանը, երբ առանձին ուշադրութիւն է դարձրած ազգային կրթութեան և լուսաւորութեան վերայ այն աշխարհներում, որտեղ հայերը բարբարոս կառավարութեան և այլազգիների իշխանութեան ներքոյ մեծ տառապանքներ կրում են և որոց դէմ Հայոց մէջ լուսաւորութիւն տարածելը միայն կարող է փրկարար զէնք համարուել, ի նկատի ունենալով և այն գլխաւոր հանգամանքը, որ Մխիթարեան միաբանութիւնը Ս. Մուրատի հրիտակը և կտակի իմաստը անարդար և միանգամայն կտակողի կամաց հակառակ է կատարել, միշտ հրաժարվել է նա ազգին և ժառանգներին հաշիւ տալուց, յայտնել է ձգտումն անօրէն ճանապարհներով անհետացնել ժառանգութիւնը և այդ ձգտումը նա, ինչպէս երևում է, պահանջում է և այսօր, — ի նկատի ունենալով այն ամենը բնական է դնել այստեղ մի հարց ևս, թէ կարելի է արդեօք մերժել Մխիթարեան միաբանութեան իրաւունքը Ս. Մուրատի կտակի կատարման մէջ և գործադրել հրիտակի գումարը այնպէս՝ ինչպէս պահանջում է ազգային լուսաւորութեան ներկայ պահանջները և կարիքները: Հրաւիրում եմ, պարոնայք, ձեր կարևոր ուշադրութիւնը այդ հարցի մեկնելու փաստերի վերայ: Կտակակատարն է կտակողի կամաց ճիշդ և օրինաւոր կատարողը: Կտակակատարի իւրաքանչիւր գործունէութիւնը, որ հակառակ է կտակի և կտակողի կամացը և իմաստին, ոչինչ է համարվում, բացի այդ անարդար կտակակատարը պարտաւոր է անձամբ և նիւթապէս պատասխանատու լինել ժառանգների առաջ, որոնց օգտին նա պարտաւոր է կտակը կատարել: Ահա այն ընդհանուր և համաշխարհային օրէնքը և կանոնը, որ սահմանափակում է կտակակատարի դերը և նորա գործունէութեան հետևանքը: Հետևանքներից մէկն այն է, որ եթէ կտակակատարը ակներև և գիտակցաբար ի չար գործ է դընում նորան կտակով տուած իրաւունքը, այդ չարագործութիւնը չարունակվում է և կրկնվում, կտակակատարը պիտի հեռացնուի իւր պաշտօնից. որովհետև օրէնքը, որ պաշտպան է ժառանգների իրաւանց և կտակի որոշումներին, չէ կարող սրբագործել ոչինչ անիրաւութիւն և անարդարութիւն, ևս առաւել ի վնաս ժառանգներին: Վերաբերելով այդ ընդհանուր կանոնը Ս. Մուրատի կտակի կատարմանը, Մխիթարեան միաբանութեան ձեռով մենք պիտի մտաբերենք միաբանութեան գործունէութիւնը, որն կատարեալ չարագործութիւն և անիրաւութիւն է ձևանում: Դուք յիշեցէք թէ Ս. Թէոդորեանը որպիսի ընդդիմութիւններ յայտնեց, պատերազմեց միաբանութեան դէմ այն անիրաւութեանց պատճառաւ, որ միաբանութիւնը գործ դըրեց և չարունակում էր այն մինչև ի չափազանցութիւն: Դուք գիտէք օրինակ, որ միաբանութիւնը Մուրատեան վարժարանը ծառայեցնում է ոչ թէ որբ և աղքատ մանկանց կրթութեան համար, այլ միաբանութեան հարուստ բարեկամների օգտին: Գիտէք նմանապէս, որ Մուրատեան վարժարանը մեծ պակասութեան և չքաւորութեան մէջ գտնվում էր, այն ինչ հրիտակի գումարի արդիւնքը Թէոդորեանի խօսքով միլլիոնների էր հասնում: Յայտնի է նմանապէս, որ քանիցս անգամ միաբանութիւնը փախել է հաշւետուութիւնից, որ եղել են միաբանութեան կողմից, անտեղի և բոլորովին ապարդիւն ծախքեր, որոնք Ս. Թէոդորեանը «գողութեան» է նմանեցնում: Յիշատակելի է և այն գըլխաւոր փաստը, որ այսօր Հայ Լուսաւորչականներն արդէն ինն տարի է մուտք չեն ունեցել Մուրատեան վարժարանը, որ այդ վարժարանը իսկապէս փակուած պիտի համարուի, որովհետև նա միացրած է Ռափայէլեան վարժարանի հետ:

Բացի այդ ամենը չի կարելի մոռացման տալ և այն կաթոլիկ, առաւել պարզ ասել, պրոպագանդայի որոշման կանոնը, որոյ զօրութեամբ իւրաքանչիւր անձն, որ մտնում է կաթոլիկների վարժարանները ուսումն առնելու համար, պարտաւոր է տալ մի խոստումն կամ յայտնել մի համաձայնութիւն, որ ինքը հոգւով, մարմնով և կամքով հնազանդելու է այն վարդապետութեանը, որ կը մատակարարեն կաթոլիկ վարժարաններումը: Ուրեմն կաթոլիկութիւնը քաղաքավարի կերպիւ իւր վարժարանների մէջ կրթութիւն տալու գլխաւոր պայման դնում է մի ուխտ ուսանողի կողմից, որ է իսկապէս դաւանափոխութիւն: Այդ պատճառաւ կաթոլիկները ամենայար-

Մանկունու համար, մարդիկ էլ քարացել են մեծ մասամբ և աղաղակելու կարողութիւն չունին:

Էջմիածնի սխրագործութեանց մասին, այո՛, շատերն աղաղակում են և աղաղակել են, բայց զուր. այդ ձայները հնչում են «ձայն բարբառոյ յանապատի». որովհետև ազգ և ժողովուրդ «րապունձների» տակն են: Յովհաննէս և Աբէլ արքեպիսկոպոսների քրիստոնեավայել թաղումները և մի քանի արժանաւոր եկեղեցականաց աքսորն և հալածանքը աղաղակեցին Էջմիածնի սխրագործութեանց մասին:

Աղէքսանդրոպոլցիք մէկ 600 և միւս անգամ 1000 ստորագրութեամբ աղաղակեցին Մանկունու քիշած սխրագործութեանց համար, բայց նոցա ձայնը մինչև ցայժմ աթոռում արձագանք չգտաւ. Թիֆլիզի Զգրաշէն եկեղեցու ժողովրդականք էլ աղաղակեցին Հայր Սարգսի առթիւ, բայց նոցա խնդրագիրը մինաբրալթի եղաւ կամ այստեղի ոճով թթու դրվեցաւ: Ամեն վիճակներում, մանաւանդ Երևանի վիճակում, բազմաթիւ աւելորդ և ագէտ քահանայք, որոնց թիւումը մանաւանդ Հաւիճեան Համալթարանի սաները նշանաւոր տեղ են բռնում — այսօր էլ աղաղակում են և մինչև մահը կաղաղակեն Հ. Մանկունու քիշած սխրագործութեանց մասին, էլ ի՞նչ կարևոր է քարերի աղաղակը: Էջմիածնայ միաբանութեան վիճակն ու վիճակների մէջ տեղի ունեցած գեղծմունք և անկարգութիւնք — մի մի մեծ ժայռեր են անխօս և անձայն, արժանաւոր վկայք Հ. Մանկունու քիշած սխրագործութեանց. մինչև անգամ անցեալ տարի նոյն իսկ ճեմարանն արձագանք տուեց այդ մեծագործութեանց աղաղակներին:

Այդ սխրագործութեանց վկայ լինել կարող են այն Հայ հասարակութիւնք, որոնք զգացել են նոցա ազդեցութիւնը, որոնք իրանց քրտնով ու կաթնով սնուցել են այդ քաջագործութիւնքն և ոչ թէ Տաճկաստանի Հայ լրագիրք և մրագիրք: Իսկ ինչ կվերաբերի Հ. Մանկունու ձգտման պատրիարքանալու, մենք չենք կարող մեր մտքովն անցնել, որ Տաճկահայք և նոցա եկեղեցականք այնքան ընկած լինին բարոյապէս և մտաւորապէս, որ կարօտ լինին պատրիարքութեան համար մի երիտասարդ, այն ևս անուս և տգէտ եպիսկոպոսի, որ իւր աստիճանը ստացել է ոչ թէ իւր գիտութեամբ, ժողովրդեան ընտրութեամբ, այլ միայն վեհափառ Հայրապետի բարի ցանկութեամբ և ողորմածութեամբ:

Թող Հ. Մանկունին այստեղ Ռուսաստանում և ոչ Տաճկաստանում հրատարակէ իւր քիշած սխրագործութիւնքն և այն այժմ և ոչ ապագայ պատմութեան թողնէ, որ շատ ձեռնտու է նորա նման մարդոց, որոնք այս կեանքի մէջ հետևում են այն խօսքերին, թէ մեզնից յետ թէկուզ ջրհեղեղ լինի:

ԱԶԳԱՅԻՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ

—

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Իւրաքանչիւր Հայ իւր համար քաղցր պարտականութիւն կը զգայ օգնել իւր հեռաւոր եղբայրների և քոյրերի կրթութեան գործին: Մենք ևս Աղէքսանդրապոլու Արղութեան օրիորդաց դպրոցի աշակերտուհիքս չկամեցանք անտարբեր մնալ դէպի այն նուիրական գործն, որ սկսել է «Արարատեան ընկերութիւնը» մեր մայրենի աշխարհում: Ուղարկելով 77 ռուբլ. խնդրեմ հասուցանէք յիշեալ ընկերութեանը: Այդ չնչին գումարը թո՛ղ լինի մեր խորին ըզգացմանց արտայայտութեան նշան դէպի մեր Վասպուրականի քոյրերը և եղբայրները՝ որոնք նիւթական միջոցների պակասութեան պատճառաւ կարօտ են մտաւոր սննդի: Ուղարկելով և նուիրատուների անուանական ցուցակը, բարեհաճեցէք տպագրել ձեր պատուական թերթի մէջ:

Եւգինէա Ղասաբեան 5 ռուբլ. Սանդուխտ Շահ-Խաթունեանց 5 ռ. Վարսենիկ Միրզայեանց 4 ռ. Կատարինէ Զիթողցեանց 3 ռ. Երանուհի Սահրատեանց 3 ռ. Եսթեր Զմշկեանց 3 ռ. Շուշանիկ Դրամբեանց 3 ռ. Եսթեր Ալմոյեանց 2 ռ. Տալիթա Մատակեանց 2 ռ. Տիրուհի Կոստանեանց 2 ռ. Գայիանէ Բաբայեանց 2 ռ. Եղիսաբէթ Վարդպատրիկեանց 2 ռ. Եսթեր Ասանէթեանց 1 ռ. 20 կ. Գայիանէ Թաղվէրանեանց 1 ռ. Տուփիթ Մուշեղեանց 1 ռ. Փեփրոնեա Աջամեանց 1 ռ. Երանուհի Տէր—Գաբրիէլեանց 1 ռ. Հռիփսիմէ Սանոյեանց 1 ռ. Վարդուհի Ամիրեանց 1 ռ. Մարգարիտ կարապէտ Սանոյեանց 1 ռ. Հռիփսիմէ Զիրիկչեանց 1 ռ. Մարիամ Փարտաշեանց 1 ռ. Մաքրուհի Մեսաղեանց 1 ռ. Մարիամ Կոստանեանց 1 ռ. Փեփրոնեա Նազարեանց 1 ռ. Օվսաննայ Սանոյեանց 1 ռ. Տիրուհի Թոխկեանց 1 ռ. Շուշանիկ Քանդարեանց 1 ռ. Վարսենիկ Նալեանց 1 ռ. Հայկանուշ Մխիթարեանց 1 ռ. Երանուհի Ջաքարեանց 1 ռ. Հռիփսիմէ Վարդանեանց 1 ռ. Թագուհի Ախախալեանց 1 ռ. Թագուհի Մուշեղեանց 1 ռ. Գենովաիէ Խաչակեանց 1 ռ. Մարսենիկ Տէր—Յակոբեանց 1 ռ. Սաթենիկ Սանոյեանց 40 կ. Զարուհի Մնացականեանց 25 կ. Հռիփսիմէ Մոսէսեանց 50 կ. Աշխէն Տէր—Մըխիթարեանց 45 կ. Շուշանիկ Ասփոյեանց 40 կ. Շողակաթ Զարխչեանց 40 կ. Հայկանդուխտ Արաբաջեանց 30 կ. Մարիամ Էնֆիաճեանց 20 կ. Զավահիր Դրամբեանց 1 ռ. Մաքրուհի Խանումաշեանց 1 ռ. Տիրուհի Աղէքսանդրեանց 2 ռ. Հռիփսիմէ Սռամբօլցեանց 1 ռ. Արուսեակ Մկրտուհեանց 1 ռ. Հայկուհի Օհանջանեանց 60 կ. Մաքրուհի Խըլխըլեանց 2 ռ. Օվսաննայ Բունիաթեանց 1 ռ. Նատալիա Բարսամեանց 2 ռ.

մար միջոց կաթոլիկութիւնը տարածելու համար տեսնում են վարժարանների մէջ, որտեղ նոքա քարոզում են, իբրև սկզնական վարդապետութիւն, հալածումըն այլ դաւանութիւնների, որ կաթոլիկները կանուանին «հերձուածողութիւն»: Վերաբերութեամբ Մուրատեան վարժարանի կաթոլիկների այդ կանոնը կատարեալ և ակներև գործադրութիւն է ունեցել, բայց բարեբաղդաբար առանց հետևանքի: Դուք մոռաբերում էք այն նամակը, որ գրել էր Հիւրմիւզ Աբբան Թէոդորեանին, թէ նա՝ Հիւրմիւզը համաձայնեց Լուսաւորչականներին, որոնց նա կանուանէ «հերձուածողներ» ընդունել Մուրատեան ուսումնարանը, այն պայմանաւ և դիտմամբ, որ նոցա դարձնեն ուղղափառութեան (կաթոլիկութեան), բայց նա տեսնում է բոլորովին հակառակը նորա դիտաւորութեան, այդ պատճառաւ նա, Հիւրմիւզը, արձակել է Մուրատեան վարժարանից քանի մի Լուսաւորչականների երեխանցը և մնացողների վերայ դարձնում է նորա՛ Թէոդորեանի, ուշադրութիւնը, կամենալով այդ բառերով հասկացնել թէ այդ մնացողներին ևս քաղաքավարի առթիւ հարկաւոր է վռնտել ուսումնարանից: Դուք մոռաբերում էք և այն պատասխանը, որ միաբանութեան անդամ Ս. Թէոդորեանը գրեց Հիւրմիւզին: Եւ անա տեսէք, երբ Մուրատեան վարժարանն ընկաւ Հիւրմիւզի կեղծաւոր շնորհիւ և ստորհողութեան պատճառաւ պապի ազդեցութեան ներքոյ, յիշեալ կաթոլիկութեան կանոնը հասաւ այն ծայրահեղութեան, որ Լուսաւորչականները վռնտուեցան Մուրատեան վարժարանից և եթէ Մխիթարեան միաբանութիւնը այսօր ձեր պահանջմանցը հետևելով կամենայ ընդունել ձեր աղքատ երեխային Մուրատեան վարժարանը, նա վերոյիշեալ պայմանը առաջ կը բերէ և կը գործադրէ իբրև դաւանափոխութեան միջոցներ երեխայի վերայ: Ես հարցնում եմ. կայ արդեօք Սամուէլ Մուրատեանի կտակի մէջ այնպիսի մի իրաւունք Մըխիթարեան միաբանութեան համար, որ նա գործ դնէ իբրև որոգայթ որսալու խեղճ Հայ մանկտին պրոպագանդային ծառայեցնելու համար: Կարելի է արդեօք նշմարել անգամ կտակի մէջ, որ Ս. Մուրատեանը ցանկանալով դառնալ բարերար իւր Հայ ազգի համար, կամենար այդ բարերարութեան միջոցով հռոմէացնել Հայ ազգը: Կարելի է արդեօք կարծել և հաստատել, որ հանգուցեալ կտակողը այդ կերպիւ կամենար բարոյական ազգասպանութիւն գործել, երբ ինքը կաթոլիկ գոլով, ի սրտէ ատում էր կաթոլիկութիւնը այն աստիճան, որ նա չը կամեցաւ որ նորա թաղման ծէսը կատարէր կաթոլիկ քահանայ, այլ հրամայեց, որ թէ հայ քահանայ չգտնուի, թող նորա դագաղի վերայ «Հայր մեր» կարդայ մի աշխարհական մարդ և այնուհետև իջեցնեն գերեզման նորա մարմինը: Վերանորոգենք մեր յիշողութեան մէջ Ս. Մուրատեանի կտակի վեցերորդ յօդուածը: կտակը պատուիրում է, որ «պարտականութիւն չը լինի ասացեալ դըպրատան ուսանողաց վերայ քահանայ լինելոյ», որ «այնքան Հայոց ազգէն որբ և աղքատ մանկունք ընդունելով դպրատանն ձրիաբար ուսումն և կերուր ուսանին և դառնան իւրեանց հայրենիքը»: Այդ բառերը, որ ցոյց են տալիս վարժարանի ուղղութիւնը՝ ընդհակառակը տալիս է միանգամայն ուսանողաց ազատութեան հետևել իւրեանց բարոյական և մտաւորական համոզմունքներին, առանց նոցա վերայ բռնութիւն բանեցնելու, որ ազատ և նպատակաւոր ուսումն ստանալով նոքա կարող լինին մաքառել այն աղիտութեան դէմ Հայաստանի մէջ, որոյ փարատելու համար կտակեց Ս. Մուրատեանը իւր հրխակը: Այդ կտակի վերոյիշեալ միտքն և նպատակը աղաւաղելը միաբանութեան կողմից, ես համարում եմ ամենագլխաւոր և զօրեղ միջոց հանել Մ. վարժարանի բոլոր իրաւունքները Մխիթարեանների ձեռքից:

Մինչև այստեղ ես ենթադրում էի, թէ Մխիթարեան միաբանութիւնն է Ս. Մուրատեանի կտակակատարը: Բայց իմ կարծիքով այդ միաբանութեանը ոչինչ իրողական, ոչինչ ներգործական իրաւունք չէ տալի Մուրատեանի կտակը: Նորա դերն է, ինչպէս իրաւացի մեկնեց Յովհաննէս Մուրատեանը, կրաւորական է խորհրդի և միջնորդութեան կամաւոր պաշտօն վարժարանը հիմնելու համար: Իսկ նիւթական մատակարարութեան հոգսը կտակը դնում է կտակակատարների վերայ, Յովհաննէս Եդուարդ և Աննայ Մուրատեանների վերայ: Անգամ մըտաւոր և բարոյական աչօք կոյր ընթերցողը այդպէս պիտի հասկանայ Ս. Մուրատի կտակի վեցերորդ յօդուածը: Նախ՝ պէտք է ասել, որ անկարելի է տեսնել երկու ձև կտակակատարներ մի և նոյն կտակի մէջ, որք միմեանց հակառակ են: Եթէ Մուրատեանները անուանուած են այնտեղ կտակակատարներ, այս բառի ընդարձակ նշանակութիւնով, անհնարին է կարծել, որ նոցա հակառակ Մխիթարեան միաբանութիւնըն է նմանապէս կտակակատար մի և նոյն նշանակութիւնով: Այդպիսի անհեթեթութիւն չը կայ ոչ կտակի բառի և ոչ նորա ընդհանուր իմաստի մէջ:

Եթէ Մատրասու ատեանը յանձնեց Մխիթարեաններին հրխակի գումարը միմիայն նորա համար, ինչպէս երևեցաւ ներկայ պատմութիւնից, որ այլապէս ազգը կարող էր զրկուիլ իւր ժառանգական իրաւունքներից և որովհետև խնամական կտակակատարները տասը տարիներ անցուցին և վարժարան ազգին համար ո՛չ թէ չըհիմնեցին, այլ և հիմնելու միտք չունէին: Դատարանը մեկնեց թէ ատեանը պարտաւոր է պաշտպանել ժառանգների իրաւունքը և երկու չարիքներից նա ընտրեց ամենափոքրը տալով հրխակի գումարը միաբանութեանը, որը իւրեան յայտնեց, ինչպէս Հայոց ազգի իրաւանց ներկայացուցիչ և պատրաստ իրագործելու այդ իրաւունքները: Հասկանալի է, որ Մատրասու ատեանը չէր ունենայ մտադրութիւն անգամ անուանելու միաբանութեանը կտակակատար, քանի սա այդպիսի անուն կամ դեր չունէր կտակի զօրութեամբ: Վերջապէս եթէ Մատրասու ատեանը տար ևս այդպիսի անուանակոչութիւն Մխիթարեաններին, Հայոց ազգը դարձեալ, իբրև ժառանգ, պարտաւոր չէ միաբանութիւնը ճանաչել այդ յատկութեամբ և չէ զրկուած իրաւունքից նորան բոլորովին հեռացնելու կեղծ պաշտօնից, քանի որ միաբանութեան չարագործութիւնները ապացուցած են: Միաբանութեան վէճը ազգի պարտապանների հետ որոնք էին Ս. Մուրատեանի որդիքը, չէ զրկում ազգին, ինչպէս ժառանգի, այլ ձև տնօրինել իւր իրաւանց կատարումը: Ուրեմն Մատրասու ատեանի վճիռը ոչինչ իրաւունք չէ տուած Մխիթարեաններին և չէ առնում ազգի բողոքի առաջը միաբանութեան դէմ:

Եթէ Եդուարդ և Յովհաննէս Մուրատեանները կամաւոր կերպիւ հրաժարեցան իւրեանց կտակակատարական դերից և բարձի թողի արին Մուրատեան վարժարանի խնդիրը, դա միայն տալիս է Հայ ազգին սոփոդական միջոց անձամբ հոգալու վարժարանի մասին և ոչ թէ այս հանգամանքը ձգում է վարժարանը օտարի յափշտակող ձեռքը, ինչպէս պապի և այլն: Որքան որ կամին կտակակատարները, թող հրաժարուին իւրեանց դերից, ընծայեն և փչացնեն կտակի հարստութիւնը, ժառանգների իրաւունքը զորանից ոչ մի կողմից վնասուել չէ կարող: Ժառանգն է տէր կտակի, կտակակատարն է ծառայ կտակի և ժառանգաց: Ուրեմն Մըխիթարեան միաբանութեան իշխանութիւնը անհետացնելը Ս. Մուրատեանի կտակի գործադրութեան վերայ ազգի կատարեալ իրաւունքն է:

5) Ս. Մուրատեանը կտակեց մի մեծ գումար Հայոց ազգի լուսաւորութեան համար: Ս. Մուրատը ոչ մի բառով չէ ասել թէ վարժարանը որտեղ պիտի հիմնուի, միայն որոշած է, որ դետինը առնուի Եւրոպայումը: Նշանակում է, որ վարժարանը պէտք է և կարևոր է հիմնել այնտեղ, ուր աւելի յարմարաւոր կը լինի ազգի մէջ լուսաւորութիւնը դիւրին կերպով տարածելու: Այսպիսի տեղ պիտի համարուին այն կեդրոնները, որոնք Հայոց ժողովրդին մերձաւոր տեղ լինին, որովհետև վարժարանի հեռաւորութիւնը ժողովրդի բնակութեան տեղից վարժարանի յառաջադիմութեան գլխաւոր արգելքն է: Ինչպէս կարող է զօր օրինակ, աղքատ Հայ երեխան Տաճկաստանի և Պարսկաստանի խորքերից գընալ փարիզ ուսումն առնելու: Եթէ փարիզ հասցնելու ծախքը լինի հրխակի հաշուով, այն ժամանակը գումարը կը պակսի և այդ ծախքը չի լինիլ համապատասխան կտակի որոշման: Ուրեմն Ս. Մուրատի կամքն այն է, որ նորա վարժարանը հիմնուի այնպիսի մի կենդրոնում, որ նորա գոյութիւնը լինի նըպատակաւոր: Այդպիսի կենդրոնը, նայելով Հայոց այժմեան դրութեան, պէտք է համարել Կ. Պոլիս կամ Հայաստանի բազմահայ քաղաքներից մէկը: Ես կարծում եմ այս որոշման դէմ ոչինչ հակառակ բան առաջ բերել չէ կարելի, բացի հռոմէական կամակորութիւնը:

6) Այդ կամակորութիւնը անշուշտ տեղիք կունենայ, երբ Հայ-լուսաւորչականները պահանջեն իւրեանց ժառանգական իրաւունքները Ս. Մուրատեանի կտակի զօրութեամբ: Հանգուցեալ բարերարը հեռատեսութեամբ որոշեց և այդպիսի հակառակութեան մեկնելու միջոցը: Կտակի 6-րդ յօդուածը սահմանաւորում է, որ իւրաքանչիւր վէճ, որ ծագէ նորա կտակի առթիւ առհասարակ, պիտի քննուի ըստ օրինաց և կարգի տէրութեան Անգղիոյ: Ինձ աներկբայ և անվիճելի է թւում, որ Լոնդրայի դատարանը և Անգղիացւոց օրէնքը միայն պիտի իշխանաւոր համարվին ստուգելու այժմ ամենայն բանակցութիւնք և անհամաձայնութիւնք, որ մեր դէմ կընէ պրոպագանդան մեր համայն ազգային ներկայ ժառանգական իրաւանց պատճառաւ: Ամենայն վստահութեամբ կարելի է արդարասիրական վճիռ սպասել այդ դատարանիցն:

7) Ուրեմն հարկաւոր է վերանորոգել ազգային ժառանգութեան խնդիրը: Պէտք է որոշել թէ ո՛վ պիտի միջազգային օրինաց մօտ, համարուի Հայոց ազգի աղքատ և որբ երեխանց իրաւանց ներկայացուցիչ և պաշտպան: Մեր պատմութիւնը և միջազգային տրակտատները նուիրել են Հայոց ազգին կաթողիկոս ամենայն Հայոց, որոյ ընտրութիւնը հաստատւում է Ռուսաց կայսեր հաւանութեամբ և Նորա հպատակութիւնը ընդունելուց յետոյ: Այսպիսի կերպիւ նորա պարտաւորութիւններն և իրաւունքները որոշվում են Հայոց Հոգևոր կոնսիստորեաների կանոնադրութիւնով (IX հատոր): Այդ օրինաց իմաստով կաթողիկոսին տուած է իրաւունք ազգային նախակրթութեան իրաւունք ծխական վարժարանների միջոցաւ և եկեղեցին իւր ծխական ուսումնարաններով ընդունուած է իբրև բարոյական անձն սեփականութիւն ձեռք բերելու, վարժարանները պահպանելու և հիմնադրելու համար: Բնական է ուրեմն, որ կաթողիկոսն իրաւատէր պիտի համարուի իբրև ազգային լուսաւորութեան հոգատար և ուրեմն իբրև ազգի կրթութեան իրաւանց ներկայացուցիչ: Նշանակում է, որ կաթողիկոսը այդ մօտ ներկայացուցիչ է Ռուսաստանի և Պարսկաստանի աղքատ և որբ Հայ մանկանց ժառանգական իրաւանց, որ Ս. Մուրատեանի կտակով նոցա նուիրած է: Իմ կարծիքով Տաճկաստանի Հայերը և նոցա

Վերոնիքա Ծաղիկեանց 1 ռ. Գումարն է 77 ռ. 80 կ. որից դուրս գալով փոստի ծախսը կը մնայ 77 ռ.

Արղութեան օր. դպրոցի աշակերտուհեաց կողմից:

Օր. Եսթեր Ալմոյեանց:
Օր. Վարսենիկ Միրզոյեանց:
Օր. Հայկանդուխտ Արաբաջեանց:

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Մողնու սուրբ Գէորգ եկեղեցւոյ ժողովրդականաց ընտրութեամբ և խնդրանօք յանձն առի նոյն եկեղեցւոյ երեսփոխանութիւնն, միայն այն նպատակաւ, որ նպաստեմ իմովանս նորա բարեկարգութեան և պայծառութեան, բայց երբ յունվարի մէկին սկսայ վարել իմ պաշտօնս, ես հանդիպեցայ միայն անվայել վարմանց, անսաստուկցութեան և մինչև անգամ դիմադրութեան. ուստի և տեսնելով, որ իմ աշխատանքս ապարդիւն պէտք է անցնի և չունենայ ցանկացած հետևանքը, երեք ամսից յետ ստիպուեցայ հրաժարվելու պաշտօնիցս: Յայտնելով իմ շնորհակալութիւնս ինձ ընտրող և գործակատարութեանս մէջ ամեն կերպով ինձ նպաստող ժամաւորաց, պարտք եմ համարում, իբրև ընտրեալ պաշտօնատար, տալ իմ եռամսեայ գործունէութեանս հաշիւն, որ ընդ ամին ուղարկելով ձեզ, խնդրում եմ հրատարակել այն ձեր լրագրի մէջ ի գիտութիւն հասարակաց:

Հաշիւ մտից եւ ելից Մողնու սուրբ Գէորգ եկեղեցւոյ յընթացս յունվար, փետրվար եւ մարտ ամսոց 1879 ամի.

ՄՈՒՏՔ

Մնացած է ի մէջն յունվարի 1879 ամի նախկին երեսփոխանից՝

ա. Առևտրական բանկի տոմսակ. . . .	900	
բ. Արևելեան բանկի տոմսակներ	339	
գ. Պատրաստի դրամ .	66	

Մտացուած է յընթացս յունվար և փետրուար և մարտ ամիսների՝

Երկտեսակ մոմից . .	943	90½
Կիսայրեալ մոմից . .	95	32½
Ցանուն լուսաւորութեան, մկրտութեանց, պսակաց, ջահից վարձ ջահից և գիազարդի. . . .	173	30
Եկեղեցւոյ արկղեց հանած է գանձանակ .	40	40
Եկեղեցական անների և կրպակների վարձ . .	255	
Յօգուտ եկեղեցւոյ ընծայ գանազան անձինքներից , . . .	375	
	3086	93

ԾԱԽՔ

Գնած է սպիտակ մոմ 12 փ. 33¾ գրվ. .	513	75
Գինին մոմ 1 փ . .	32	
Հասաի, երեք ժամկոչի և լուսարարի ռոճիկ .	98	
Ջահերը, բուրվառները, շուրջառները, մեծ գորգը, սեղանի առաջ դրած շամողանը մաքրելու և նորոգելու համար . .	149	5
Երկու ժամկոչների համար եկեղեցում հագնելու համար մի մի մահուդէ չուխաներ իրանց վարտիքներով . .	34	
Ժամաշապիկներ, հողաթափներ, գուլպաներ, բազպանացու, փոքրիկ գորգ, պառ փառչա Նընջեցեալի սեղանի և երեք գրակալների համար .	141	75
Սուրբ Գէորգի և Աստուածածնայ պատկերների, պատուանդանի, կանանց նախասենեակը ներկելու, պատերին մանր կարկատաններ անելու համար և ներկին կաւրի ու խողովակների համար	18	
Հին և նոր պահարաններ իրա ապակիներով և կամաշը Նորոգելու համար. Նրա սաղէմայ արկղին Էջմիածնայ և Հայպատի գանձանակի համար . . .	46	5
16 հատ մետաղեայ ռուզատկաների համար, սեղանի և Շափինեանցի շամադաններ համար .	6	
Ժամաշապիկներ, վարագոյրը և գանազան եկեղեցապատկան զգեստներ մոմից խառակելու, լուանալու և կարկատելու, գորգերը խառակելու և բակից աղբը դուրս տանելու համար . .	23	40
Զբօրհնեաց օրը պատանոցների վարձ . .	1	
Ջահերը վառելու համար Թել . . .	4	
Երեք հատ հասարակ մատեաններ . . .	1	5
Ածուխ, Թի, կողպէք, ջրշեններ, պոռոնցոր, բաժակներ, բաժակակալներ, երկու ջվալ կիսայրեալ մոմը պահելու, ջրի, նշխարի մաղ, ունելիք, արդար ևուղ, վըձին	22	25
Երգիչներին վարձ . .	43	75
Դագադարարձ . .	15	50
Չորս հատ աշտանակի մեծ մոմեր . . .	10	
Մշակներին . . .	1	20
Քաղաքական վարչութեան մնացած ապառիկ.	7	76
Վարձ քարտաշին և եկեղեցւոյ դռները շինելու	5	
Երկու ատենի ժամագիրք	16	
Ի պէտս շինութեան կամրջի և Ցորդանանու	50	
Կրամիտները, ժեշտերը, գմբէթի շուշաները, ժոլոները, ձողով և մեխով ամրացնելու և դեղ քսելու համար. . .	42	59
Ծախսած է,	1282	10

ազգային հիմնադրութիւնները և գործող անձինքը այլ դիրք են բռնում իւրեանց պէտութեան մէջ: Նոքա են քաղաքական հիմնադրութիւններ, քաղաքական իրաւանց տէր և ոչ թէ միայն մասնաւոր կամ հասարակական: Նոցա գործունէութեան պայմանները այլ են և աւելի ընդարձակ, քան թէ կաթուղիկոսինը: Ազգային ժողովն իւր նախագահով (պատրիարքով) այլ բարոյական մարմին է, քան թէ Սինօդը Էջմիածնայ իւր նախագահով: Ես կարծում եմ, որ դոցա մէջ եղած զանազանութիւնը վերոյիշեալ մօտ այնքան յայտնի է, որ մանրամասնաբար խօսելն իմ կողմանէ աւելորդ է:

Այդպիսի զանազանութիւնը պայմանաւորում է և վերոյիշեալ իրաւանց ներկայացուցիչների տարբերութիւնը: Ես կարծում եմ, որ սխալանք կը լինէր եթէ Մուրատեան կտակի խնդիրը յարուցանելու համար Տաճկաբնակ Հայք ճանաչէին միայն Էջմիածնայ Սինօդի իրաւունքը: Առաւել հետևողաբար կը լինէր, որ Տաճկաբնակ Հայերը պաշտպանէին իւրեանց իրաւունքներն այն միջոցներով և անձանց կամ հիմնադրութեանց ձեռամբ, ինչպէս որ նոքա միշտ և յաջողակ կերպով պաշտպանել են իւրեանց ամբողջ Եւրոպայի առաջ մինչև ցայսօր: Իմ կարծիքով Ռուսաբնակ և Պարսկաստանի Հայերը կարող են որոնել Ս. Մուրատի կտակի իրագործութիւնը Էջմիածնայ Սինօդի նախագահի ձեռամբ, իսկ Տաճկաբնակ Հայերը — Ազգային ժողովի նախագահի ձեռամբ:

8) Եթէ այդ երկու նախագահքը իւրեանց սրբազան ազգասիրական զգացմունքներով կամենան այսօր (իմ կարծիքով դա նոցա պարտաւորութիւնն է անգամ) «կորզել» Մխիթարեանների ձեռքից յափշտակած ազգային ժառանգութիւնը, պէտք էր միայն որոշել, թէ ինչ ճանապարհով աւելի կանոնաւոր և նպատակաւոր կը լինէր ազգիս համար այդ «կորզելը»:

Կայ երկու ճանապարհ — դիպլօմատիկական և դատաստանական:

Եթէ այս դիպուածում գործ դնուի դիպլօմատիկական ճանապարհը, կարելի է գուշակել, որ Մուրատեան վարժարանը կը հիմնուի այն երեխանց գերեզմանների վերայ, որոնց օգտին նա ծառայելու է: Հայաստանը, որ յայտնի է այժմ իբրև «փոքր Ասիոյ մաս» անուանով, այս օրերս և դեռ շատ տարիներ քաղաքական աշխարհի մէջ ձեռնալու է ինչպէս «քար գայթակղութեան»: Համարեա ամբողջ Եւրոպան նորա մէջ տեսնում է կենդրոն և միջոց մեզ համար անհասանելի բարձր գաղափարներ իրագործելու: Մենք տեսնում ենք միայն, որ փոքր Ասիայի ծայրերը գտնվում են անհրեւոյթ էակների ձեռքերում, որ մեծ ուժով քաշում են նորան դէպի իւրեանց կողմը: Այստեղ Տաճկական պետական իրաւունքն է, այնտեղ Անգլիայի հովանաւորութիւնն է իւր մեծամեծ չահերով և այլն և այլն: Հաւանական է Հայոց մտաւոր և բարոյական վերականգնումն ուսման և ուսումնարանների միջոցաւ անհօգին մեծութեան խնդիրներ և քաղաքական չահեր է առաջ բերում և դնում է մեծագոյն հարցական նշան ախոյեանների համար: Հայոց ազգի այդպիսի վերականգնման խնդիրն է պետական չահերի խնդիր — շատ պարզ բան է: Ուրեմն կարելի է ասել, որ ազգային լուսաւորութեան խնդիրն այս ճանապարհի վերայ կանգնելով կ'ենթարկուի այդ չափազանց և անվերջ դեգերմանց և պատերազմի, որոնց ենթարկվում են պետական չահերը: Բացի այդ գաղտնի բան չէ, որ նախարարութեանց մէջ սկսած բանակցութիւնների վերջը տեսնում են երրորդ և չորրորդ մարդկային սերունդը և ոչ թէ նոցա ժառանգակիցները: Անհնարին է այս դիպուածում յոյս դնել նորա վերայ, թէ Հայերն ունին այս ինչ մեծ մարդոց կամ մեծ ազգի համակրութիւնն, այդ բանը ամենից քաջ գիտեն Տաճկաբնակ Հայերը իւրեանց վերջին օրուայ տեսածից:

Իմ անձնական համոզմունքը հակառակ է դիպլօմատիկական ճանապարհին. — բայց և այնպէս՝ թող ազգը ընտրէ այն միջոցն, որ նորան աւելի յաջողակ կերևի:

Բոլորովին այլ պատկեր ունի դատաստանական ճանապարհը: Մխիթարեաններն արդէն ապացուցեցին, թէ որքան յաջողակ է և պտղաբեր այդ միջոցը, թէ որքան հաջակատար պաշտպանութիւն գտաւ Հայոց ազգը Մարսէյլու ատեանում իւր իրաւունքը ստանալու համար Ս. Մուրատի կտակով: Միևնոյն օրէնքն և միևնոյն անգլիացւոց դատարանը պիտի վճռէ մի և նոյն ազգի վէճն և իրաւունքը Մխիթարեանների հետ: Դարձեալ կասեմ, եթէ այդ տեղեկութիւններն, որ մենք ունինք Մուրատեան կտակի և վարժարանի մասին ճիշդ են, իմ անձնական կարծիքն այն է, որ անհընարին է, որ դատարանը չը ճանաչէ ազգիս իրաւունքն այն մօտ, ինչպէս ես կարողացայ բացատրել նախընթաց կէտերում:

9) Ինչ որ վերաբերում է տեղեկութիւններին, ընական է, որ նրանց պէտք է ժողովել, թէ օրինակ, Մխիթարեան միաբանութիւնը լինի այնքան բարի և ազնիւ, որ իւր գործերը և գրագրութիւնները Ս. Մուրատեանի կտակի մասին, չընչացնէ: Հակառակ դիպուածում Պոլսոյ, փարիզու, Մարսէյլու և Աւստրիայի (Նախկին) տեղեկութիւնները հանդերձ այն տպագրութիւններով, որք յայտնի են և հանդերձ կենդանի ականատեսների բարեխիղճ ցուցմամբ — սոքա բաւական են վերականգնելու Հայ ազգի որբ և աղքատ մանկանց ժառանգական իրաւունքը Մուրատի հրիտակի վերայ:

10) Այդպիսի մի մեծ և վսեմ գործի մէջ պիտի միանան ամենքն, որք Հայ անուն և ծագումն ունին, ի բաց դնելով դաւանութեան խտրութիւնը: Ես միանգամայն համոզուած եմ, որ մեր կաթոլիկ—հայերը չարաչար սխալանաց մէջ են գտնվում և ահա քանի տարիներ է, որ տանջվում են նոքա, չեն կամենում հասկանալ, որ միանգամայն խաբուած են այն չահամոլ պղտոր խղճմտանաց տէր անձանց ձեռով, որք անխնայ կերպով ձգում են նոցա պապականութեան գժոխքը, որ ամենայն գժոխքներից ամենազզուելին է: Սուտասիրութիւնը, որ անուանված է Հռովմէական վարդապետութիւն, անփորձների որսորդն է և այդ կերպիւ մեր խեղճ ազգը, վաճառվում է անսխալականութեան սարկութեանը, որ թէ հոգւոյ և թէ մարմնոյ համար մահաբեր է: Խաբուած են, կասեմ ես, մեր եղբայրները չհասկանալով, որ ստախօս Հիւրմիզները և սորան նման գարշելի հոգիք ոչինչ միտք չունին օգնելու այն մոլորեալներին, որոնց նոքա ձգում են պրոպօգանդայի գեհենի մէջ, այլ միայն փնտռում են այն սնագլխները իւրեանց անձնական չահերն և ծաւալոգի բանդերի համար բնակիչներ են գտնում: Ազգ, կրօն, խղճմտանք և այլն այսպիսի մարդկութեան վսեմ զանձեր յատուկ են նոցա համար: Մինչ պատմութիւնը և ներկայ Եւրոպայի կեանքը չէ ապացոյց սասծներիս: Անհոգի և անզգայուն գազանը այնպէս անխղճօրէն չէ վնասում մրջիւններին, ինչպէս պապականութիւնը ջնջեց մարդկային բաղդը և բարիքը: Նոցա սարսափելի գործերը հայհոյանքներ էին Աստուծոյ նախախնամութեան դէմ: Թող հասկանան հայ կաթոլիկները, որ այստեղ չկայ կրօնի խնդիր, որ աւելի է ամենայն քննութիւնից, այլ պապականութիւնը ունի մարդկութեան հետ անձնական հաշիւ և ձգտել է միշտ դէպի մարդութեան կործանումը: Ազգ, ազգային լուսաւորութիւն և այլն — սոքա խաղալիք են աբեղայի համար, և լաւ միջոցներ են ասպատակութեան, պոռնկութեան և այլն: Եւ այդ հասկանալով մարդկութիւնը վռնտեց պապականութիւնը իւր շրջանից ազատելով մարդուս նորա խղճմտանքը կաշկանդող Հռոմէականութեան շղթաներից: Խլեց նա աբեղաների ձեռից և ուսումնարաններն և մարմնաւոր իշխանութիւնը: Թող մեր հայ կաթոլիկ եղբայրները օրինակ վեր առնեն Ֆրանսիացիներից և Պրուսացիներից: Թող նոքա մնան կաթոլիկ, եթէ այդ նոցա դուր կգայ, բայց թող և մնան նոքա ազգութեամբ հայեր և ոչ թէ կարդինալների հողաթափների տակ ճմլվող զեռունք:

Ուրեմն թող հայ կաթոլիկները, որոնք նոյնպէս զրկուած են Մուրատեանի հրիտակից, ինչպէս և Լուսաւորչականները, միանան դիտաւորութեամբ և ազգասիրական հոգւով և ստանան իւրեանց իրաւունքները, ապահովեն նոցա, որ ցեցը չուտէ և գողը չգողանայ: Այդպիսի կերպով, այդպիսի խմբովին, ազգային պահանջը, կընէ Մխիթարեան միաբանութեան այն դրութեան մէջ, որոյ ընական հետևանքն կլինի ազգային լուսաւորութեան տան հաստատուն շինութիւնը:

Ահա այն տասն խնդիրները, որոնք ծագում են Մուրատեանի կտակի և վարժարանի պատմութիւններից:

Այսքանս թող բաւական համարվի վերջ դնելու մեր այս օրուայ զրոյցին և եթէ իմ այսքան թերութիւններով առատ խօսակցութիւնը համոզեց ձեզ իրաւացի համարել, որ Հայոց ազգի որբ և աղքատ մանկունք զրկված է օտարի ձեռով, եթէ այդ խօսակցութիւնը առիթ կտայ ձեզ մտածելու յիշեալ խլած իրաւունքները վաստակելու, եթէ վերջապէս, ինչ որ ինձ անկասկած կթվի, դուք համախոհ էք ինձ հետ, թէ մեր ազգի բաղդաւորութիւնը և փրկութիւնը ամենայն չարիքներից պէտք է տեսնել ազգային լուսաւորութեան մէջ—ես ինձ նպատակիս հասած կհամարեմ: Եթէ մեծահանճար Ֆրանսիացի հեղինակն, որ աշխարհիս մէջ կատարեց այն՝ ինչ որ հնարաւոր էր հողածնի համար, հոգին աւանդելու բոպէում խնդրեց «լոյս, լոյս և լոյս», մենք հայերս որ նոր ենք յարութիւն առնում մեր կիսամեռ դրութիւնից, պարտաւոր ենք հետևել նորան և ցանկանալ միայն, «լուսաւորութիւն, լուսաւորութիւն և լուսաւորութիւն»: Բարոյապէս լոյսը և լուսաւորութիւնը կը ցրուեն այն թանձր մառախուղը, որ ուրիշները մեքենայօրէն ձգել են մեր հայրենիքի հորիզոնի վերայ, նոքա ակներև են և են այն երկու սրբազան մեծ սիւներն, որոնց վերայ հիմնված է մեր ազգային հաստատութիւնը և շինութիւնը, այն է եկեղեցին, կրօնը և ազգային լուսաւորութիւնը: Մենք հասկացել ենք և աւելի ևս կհասկանանք, որ մեր պարտաւորութիւնն է միացնելով մեր բազուկները ուժով բռնենք և պաշտպանենք այդ ազգային հաստատութեանց սիւները, և չմոռանանք երբէք, որ եթէ սոցանից մէկը խախտի մենք առաջինը կլինենք, որ կճմլվենք փլատակների տակը: —Ազգային լուսաւորութիւնը կը պարզէ այն ուղիղ ճանապարհը, որ տարել է ուրիշ ազգութիւններին դէպի յառաջադիմութիւն և հասցրել է նոցա ազգութեանց կատարելութեան: Եւ այդպիսի կերպիւ մարդկութեան պատմութիւն (կգայ այն օրը), որ մասնաւորիչ անելու է զանազան ազգաց չահաւէտ գործերը, ցոյց կտայ և մի սքանչելի գործ, որ կանուանի Հայոց ազգի լուսաւորութեան, անկախութեան և մեծութեան գործ:

Ս. Արծրունի:

Մնում է առ ձեռն՝

ա. Առեւտրական բանկի տոմսակ . . .	900
բ. Արեւելեան բանկի տոմսակներ . .	339
գ. Առ ձեռն դրամ .	365 93
	3,086 93
դ. Ունի ստանալու եկեղեցին մոմից, որ տուած է ժամկոչին ծախելու . . .	28 92

Պահարանում կայ՝

ե. Սպիտակ մոմ	27 գրվ.
զ. Դեղին	5 „

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Тиф. Вѣст. խմբագրութիւնը լսել է, որ Կովկաս եկել է յայտնի չաքարագործ Գալիչկեվիչը, որ 1875 ին այցելել էր մեր երկրին, որպէս զի հետազօտէ այս երկրի յարմարութիւնը չաքարագործութեան համար։ Նա իւր հետազօտութիւններով այն եզրակացութեան է հասնում, որ մեր Կովկասեան երկիրը շատ յարմարութիւններ ունի այդ գործի համար և նորա ուշքը այս մասին գրաւում է Լենկորանի գաւառը. ուր և բարձրագոյն իշխանութիւնը նրան տուել է այդ գործի մշակութեան համար 500 դեսեատին յարմար գետին։

—

Թիֆլիզի շրջականներից շատ տեղերը վնաս են կրել մորեխից։ Հալաբարի տափերը, Գերմանական կոլոնիայի արտերն, նոյնպէս և Կոջու արտերը բոլորովին զոհ են եղել մորեխների արշաւանքին։ Նոքա դեռ նոր Թեւաւորվել են և ուր արդեօք հիւր կերթան, չէ երեւում դեռ ևս։

—

Դրոյեբա լրագիրը հաղորդում է, որ Մցխեթա և Ցելկանի իշխանների մէջ աւազակութիւն է պատահել: Յափշտակել են փոստը։ Ասում են, որ յափշտակած իրերի մէջ կան և այնպիսիք, որոնք պատկանում էին Նորին կայսերական բարձրութեան Կովկասեան փոխարքային։

խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ·
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ·

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ։

ԱՌԱՋԻԿԱՅ ԿԻՐԱԿԻ

Ամսոյս 27-ին, առաւօտեան 10 ժամին, Կուկիոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ „Թանդոյեան" օրիորդաց ուսումնարանը կատարելու է իւր տարեդարձը և տասն ու հինգ տարուան հաշուատուութեան հանդէսը։

Ներկայ 1879 Թուի յուլիսի սկզբից, տէրութեան Թոյլտուութեամբ Թբիլիզի մէջ հրատարակվելու է ռուս «Кавказъ» լրագրի չափով, քաղաքա—գրականական շաբաթաթերթ «Աշխատանք» ռուս և հայ լեզուներով հետևեալ պրոգրամով:

1) Դատաստանական ժամանակագրութիւն.

2) Տեղական կեանքի ուսումնասիրութիւն. թէ տնտեսական, թէ վիճակագրական ու թէ գիւղատնտեսական կողմերից:

3) Գրականութիւն. գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ՝ լինեն նորանք թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ: Քննադատութիւն ռուս, հայ և օտարազգիների գրականութիւնների:

4) Քաղաքականութիւն. քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:

5) Մանր լուրեր:

6) Մասնաւոր յայտարարութիւններ:

«Աշխատանք» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը Թիֆլիզում առանց տուն հասնելու 5 ռ.

Տուն հասցնելով 5 ռ. 50 կ.

Ռուսիոյ զանազան քաղաքներ ղրկելով 6 ռուբլ.

Փոստային դաշնակցութեամբ ղրկելով արտասահման 7 ռուբլ:

Ստորագրութիւնն ընդունվում է Թիֆլիս կենտրոնական գրավաճառանոցում:

«Աշխատանքի» համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարաքաղաքացիք պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գալը ուղարկել ուղղակի «Աշխատանք» լրագրի խմբագրին այս հասցէով. Григорію Тер-Меликсетову, редактору газеты «Трудъ», въ Сололакахъ, на Сололакской ул. у Вознесенской церкви возлѣ стараго моста въ Д. Михаила Галустова подъ № 110.

Նիւթեր և անմշակ յօդուածներ «Աշխատանքի» խմբագրութիւնը ընդունում է միմիայն և յատկապէս ռուս, հայ, Ֆրանսիական և վրացական լեզուներով:

խմբագիր—Հրատարակող Գրիգոր Տէր—Մելքիսեդեկեան:

ՓԱՐՈՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

վերնագրով պատկերազարդ հանդիսի ներկայ 1879 ամի տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդացը։ Մեղուի ընթերցողք կարող են ծանօթանալ այդ հանդիսի արտաքին ձեւի և բովանդակութեան հետ ընդ սմին բաժանուած յայտարարութենէն։ Գինն առաքմամբ է 1 ռ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՓՈՐՁ"
ԱՄՍԱԳՐԻ
ՀԻՆԳԵՐՈՐԴ(ՄԱՅԻՍԻ) ՀԱՄԱՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ I. Հացի խնդիր, ազգային վիպասանութիւն Պերճ Պռօշեանցի. 2. Հպատակութեան և խղճի ազատութեան գաղափարը նախնի Հայոց մէջ, կ. Կոստանեանցի։ 3. Օտար լեզուների դասատուութեան եղանակները։ 4. Գարիբալդի, գործ Ժօրժ Սանդի 5. Գարուն Հայաստանի, բանաստեղծութիւն Գ. Բարխուդարեանցի։ 6. Սանպիկուիկեանները, գրոյց Չարլս Դիկէնսի 7. Ալեքսանդրօպօլից դէպի Կարին, ճանապարհորդութիւն Քաջբերունու. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ 8. Հասունեան և Հակահասունեան խնդիր, Ծերենցի։ ՅԱՒԵԼՈՒԱԾ 9. Յայտարարութիւն, Ամբրոսիոս վ. Ռուբինեանի։

Ստորագրուել կարելի է Տփխիսումը «Փորձի» խմբագրատանը և կեդրոնական գրավաճառանոցում։ Օտար քաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով։ — Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала «ПОРДЗЪ»

խմբագիր—հրատարակիչ
Աբգար Յովհաննիսեան։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գրավաճառ Զաք. Գրիգորեանցը ստանալով «Թորոս Լևոնի» հեղինակ—մեծապ. պ. Ծերենցից տպագրելու իրաւունքը նորա նոր աշխատութիւնը, որոյ վերնագիրն է «Երկունք 9-դ դարու» և որոյ նիւթը վեր է առած Հայոց պատմական կեանքից իններորդ դարի,—յանձնեց տպարանին և շուտով լոյս կը տեսնի:

Գրքի արժանաւորութեան մասին խօսելն այժմ աւելորդ եմ համարում. ով որ ծանօթ է պ. Ծերենցի գրուածների հետ, նա կը հասկանայ թէ ի՞նչ հոգւով և ի՞նչ տեսակ գրուած է: Գինը լինելու է 1 (մի) ռուբլի, թէ Տփխիսում և թէ օտարաքաղաքացւոց համար:

50 հատ առնողի համար հարիւրին 20% զիջումն կը լինի:

Գրավճ. Զ. Գրիգորեանց։

Ս. ԿԱՑԻ
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԻ ԴԵՊՕ



Ստանում է մեծ քանակութեամբ շարունակաբար ծոցի ընտիր ժամացոյցներ եւրոպական զանազան երևելի գործարաններից: Ստացուած է նոյնպէս մեծ քանակութեամբ Փարիզի աշխարահանդէսից պատի և գրասենեակի ժամացոյցներ ու զարթեցնող մեքենայ: Ժամացոյցների ուղիղ բանելուն երաշխաւոր է խանութի տէրը: Խանութը գտանվում է Դվորցովի փողոցում № 8:

ԱՌԱՋԻԿԱՅ ԿԻՐԱԿԷ
ԱՄՍՈՅՍ 27-ԻՆ

Մողնու ժողովրդականք հրաւիրվում են նոր երեսփոխանի ընտրութեան համար։ Յուսալի է, որ Մողնու ժողովրդականք անտարբեր չեն գտանվիլ այս գործում, որ յոյժ կարևոր է եկեղեցու պայծառութեան համար։

ՆԵՐՍԻՍԵԱՆ

Հայոց Ազգային—Հոգևոր Դպրոցի աշակերտների տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետևեալ կարգաւ.

Ամիս և ամսաթիւ	Դասատուններ	Առարկաներ
Մայիսի 23	Է	Մանկավարժութիւն,
25	Ե	Ռուսաց Պատմութիւն,
26	Է	Կրօն և Աստուածաբանութիւն,
28	Ե	Ֆիզիքա և Բնագիտութիւն,
30	Է	Հայոց Մատենագրութիւն,
31	Ե	Հայոց Պատմութիւն,
Յունիսի 4	Ե	Աշխարհագրութիւն,
5	Է	Ընդհանուր Մատենագրութիւն։

I, II, III, և IV դասատանց գրաւոր քննութիւնները լեզուներից և մաթեմատիքայից լինելու են. I և II դասատանց մէջ Մայիսի 22-ին և 23-ին, իսկ III և IV դասատանց մէջ՝—Մայիսի 24-ին, 25 ին և 27-ին։

Հարցաքննութիւնը մինչև մայիսի 26ը լինելու է, զկնի ճաշու $5^{1}/_{2}$ ժամից և այնուհետև առաւօտները 8 ժամից, իսկ պատրաստական դասատան քննութիւնները լինելու են նոյնպէս առաւօտները։

PRIME A NOS LECTRICES

POUR DOUZE FRANCS AU LIEU DE QUINZE
ON RECOIT PENDANT UN AN LA MODE FRANCAISE

Ce journal, paraissant tout les Samedis, est le plus intéressant, le mieux sfait et la plus complet de tous les journaux de modes.

C'et le seul qui donne des Patrons découpés de grandeur uaturelle.

DÉTACHER CE DULLETIN et l'adresser, avec un mandat-poste de 12 francs, à M. ORSONI, Administrateur de la Mode Française, 37, rue de Liile, á Paris.

Հին—Հայաստանի քարտէզը գարուսով, մետաքսով և յուլունքներով ասղնեգործելու համար պատրաստում եմ զանազան տեսակ ՈՒԶՈՐՆԵՐ —համառօտ, մանրամասն, մեծ և փոքր գիրքերով:

Մանրամասնի մէջ որոշուած կլինեն ա. տէրութեանց և նահանգների սահմանները, գետերը, վտակները, լճերն ու լճակները. նահանգների, մայրաքաղաքների և պատմական նշանակութիւն ունեցող քաղաքների, բերդերի և գիւղերի անունները և բ. զուգահեռական և միջօրէական գծերն աստիճաններով և մասշտաբ:

Օրիորդական ուսումնարանների վարչութիւնները և կամ մասնաւոր ցանկացողները կարող են դիմել «Մեղուի» խմբագրատուն:

Նոյնպէս պատրաստում եմ զանազան տեսակ հայերէն տառեր ասղնեգործութեան համար:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 26-го МАЯ 1879 г. Типографія Амб. Энфіаджянцъ и К° Տուն Բժշկեանց Մ. Թումանեանց·